Anna Darbinyan

Digitally signed by Anna Darbinyan
DN: cn=Anna Darbinyan, c=AM, l=Yerevan, st=Yerevan, o=Gladzor UCO, email=info@gladzoruco.am
Date: 2012.07.24 04:34:33 +04'00'

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԳԼԱՁՈՐ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
Բաժնետերերի արտահերթ 25.07.2003թ.
թիվ 1 ընդհանուր ժողովի որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
28.08.2003թ.
Գրանցման համարը 5

ՓՈՓՈԽՎԱԾ Է
Բաժնետերերի 22.11.05թ. արտահերթ ընդ. ժողովի թիվ 5 որոշում
Բաժնետերերի 20.02.07թ. արտահերթ ընդ.ժողովի թիվ 2 որոշում
Բաժնետերերի 18.12.08թ. արտահերթ ընդ.ժողովի թիվ 5 որոշում
Բաժնետերերի 01.10.09թ. արտահերթ ընդ.ժողովի թիվ 1 որոշում
Բաժնետերերի 01.03.10թ. արտահերթ ընդ.ժողովի թիվ 1 որոշում
Բաժնետերերի 10.11.10թ. արտահերթ ընդ.ժողովի թիվ 4 որոշում
Բաժնետերերի 01.09.11թ. արտահերթ ընդ.ժողովի թիվ 3 որոշում
Բաժնետերերի 22.06.12թ. արտահերթ ընդ.ժողովի թիվ 17 որոշում

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է
14.03.2006թ. թիվ 1/128 Ա որոշում
19.03.2007թ. թիվ 1/350 Ա որոշում
26.01.2009թ. թիվ 1/45 Ա որոշում
26.10.2009թ. թիվ 1/1348 Ա որոշում
07.04.2010թ. թիվ 1/295 Ա որոշում
18.11.2010թ. թիվ 1/1696 Ա որոշում
27.09.2011թ. թիվ 1/1062 Ա որոշում

Խորհրդի նախագահ
[illegible]

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

«ԳԼԱՁՈՐ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ք.Երևան
2012թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև վարկային կազմակերպություն) ստեղծվել է «Գլաձորբանկ» ՓԲԸ-ի գործունեության տեսակի՝ որպես վարկային կազմակերպության փոփոխման 27.05.2003թ. թիվ 01-246 միջնորդագրի և ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի՝ թիվ 83 թգ (Ա) որոշմամբ, և համարվում է «Գլաձորբանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդը:

1.2. Վարկային կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են կազմակերպության բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.3. Վարկային կազմակերպությունը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից: Ընկերությունը հրապարակային օֆերտաների միջոցով փոխառություններ չի ներգրավում:

1.4. Վարկային կազմակերպությունը ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք, անկյունային դրոշմակնիք:

1.5. Վարկային կազմակերպության իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1բ N 42:

1.6. Վարկային կազմակերպության լրիվ ֆիրմային անվանումը՝
հայերեն «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
անգլերեն Gladzor universal credit organization CJSC

1.7. Վարկային կազմակերպության կրճատ անվանումը՝
հայերեն՝ «Գլաձոր» ՈՒՎԿ ՓԲԸ
անգլերեն՝ Gladzor UCO CJSC

II. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1. Վարկային կազմակերպությունը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով լիցենզիայի հիման վրա կարող է՝

ա/ ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ, ընդ որում ֆիզիկական անձ հանդիսացող մասնակիցներից ներգրավել փոխառություն միայն այն դեպքում, եթե տվյալ մասնակցի մասնակցությունը կանոնադրական կապիտալում կազմում է առնվազն 5 տոկոս կամ եթե տվյալ փոխառության գումարը կազմում է առնվազն 30մլն. ՀՀ դրամ:

բ/ տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

գ/ տրամադրել երաշխիքներ,

գա/ թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր, կատարել նման այլ գործառնություններ

գբ/ մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ

դ/ «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի անունից թողարկել ճանապարհային չեկեր, իրականացնել այդ չեկերի առքուվաճառք, թողարկել վարկային քարտեր, իրականացնել այդ քարտերի սպասարկումը»:

դ1/ «Գլաձոր ՌԻՎԿ» ՓԲԸ-ի անունից թողարկել և տեղաբաշխել՝

- առանց ապահովման պարտատոմսեր՝ ընկերության կանոնադրական հիմնադրամը չգերազանցող գումարի չափով,
- երրորդ անձանց կողմից տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր, ընդ որում, դրանց առնվազն 30% պետք է ապահովված լինի միջազգային կազմակերպությունների, ըստ Ստանդարտ և Փուրզ, Ֆիչ կամ Մուդիզ վարկանշային կազմակերպությունների տրամադրած վարկանիշների՝ ԱԱԱ (Ասա)-ից ԲԲԲ-(Բասա3) վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական բանկերի կամ այլ կազմակերպությունների կողմից:

ե/ մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),

զ/ Անկանխիկ գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ, կանխիկ գնել և կամ վաճառել արտարժույթ միայն այն դեպքում և այն չափով, որն անհրաժեշտ է տրամադրված վարկերի մարումը սպասարկելու համար: Առք ու վաճառքի կանխիկ գործարքները իրականացնելիս կլորացնել գործարքի արժեքը 5000 ՀՀ դրամի շրջանակներում:

զա/ գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և մետաղադրամ

է/ իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ը/ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

թ/ մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

ժ/ ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժա/ Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

2.2.Վարկային կազմակերպությունը նշված գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

2.3.Վարկային կազմակերպությունը իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում և միջնորդ դատարանում:

2.4.Վարկային կազմակերպությունը իրավունք ունի հաշիվներ բացել բանկերում և պարտավոր է հաշվի բացման մասին 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել ՀՀ Կենտրոնական բանկին:

2.5.Վարկային կազմակերպությունն ինքն է որոշում տրամադրվող վարկերի, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և միջնորդավճարների չափը:

2.6.Վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկեր կամ փոխառություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով:

2.7.Վարկային կազմակերպությունը իրավունք ունի փոխառություններ ներգրավել և (կամ) նմանատիպ գործարքներ կնքել բացառապես իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և իր մասնակիցների հետ, ընդ որում Կենտրոնական բանկը կարող է սահմանել «Վարկային կազմակերպության մասին» օրենքով սահմանված սահմանափակումները:

2.8.Վարկային կազմակերպությունը իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

2.9.Վարկային կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար: Վարկային կազմակերպության բաժնետերերը կազմակերպության պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում կանոնադրական հիմնադրամում իրենց կողմից կատարված ներդրման չափով, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

2.10.Վարկային կազմակերպությանն արգելվում է իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն:

III.ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ, ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

3.1. Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամը կազմում է 601,000 հազ. ՀՀ դրամ, որը ներառում է 12000 տվյալական և 20 փոփոխական շահաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր, յուրաքանչյուրը՝ 50 000 դրամ անվանական արժեքով:

3.2. Վարկային կազմակերպությունը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը կազմակերպության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերն լրիվ վճարված են :

3.3. Վարկային կազմակերպությունը կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարել՝

ա/ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման

բ/ բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում «Բաժնետիրական ընկերության մասին» օրենքով նախատեսված դեպքում, դրանց մի մասի ձեռք բերմամբ և մարմամբ:

3.4. Վարկային կազմակերպությունը իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով կանոնադրական կապիտալի չափը ավելի կփոքրանա օրենքով սահմանված նվազագույն չափից: Վարկային կազմակերպության կողմից կանոնադրական կապիտալը սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հիմք է վարկային կազմակերպության լուծարմանը:

3.5. Վարկային կազմակերպությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական հիմնադրամի 15 %-ի չափով:

3.6. Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծության, ապա հատկացումները այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ 5 %-ի չափով:

3.7. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է կազմակերպության կորուստները ծածկելու, ինչպես նաև կազմակերպության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե կազմակերպության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

3.8. Վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստել կազմակերպության տնտեսական զարգացմանը և աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը:

3.9. Այլ ֆոնդերի ձևավորումն ու օգտագործումը, դրանց հատկացումների կարգը և չափը որոշվում են վարկային կազմակերպության ժողովի կողմից:

IV. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

4.1. Վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի ձևավորմանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:

4.2. Վարկային կազմակերպության բաժնետերերը պարտավոր են՝

- սահմանված կարգով կատարել դրամական ներդրումներ,

-չիրապարակել վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

4.3. Վարկային կազմակերպության բաժնետերերը կարող են կրել կանոնադրությամբ նախատեսված և օրենքին ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտավորություններ:

4.4. Վարկային կազմակերպության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքներ:

4.5. Սովորական բաժնետոմսի սեփականատերերը իրավունք ունեն՝

- մասնակցել կազմակերպության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- մասնակցել կազմակերպության կառավարմանը,
- ստանալ շահաբաժիններ կազմակերպության գործունեությունից առաջացած շահույթից,
- ստանալ կազմակերպության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (բացի գաղտնի փաստաթղթերից),
- ընդհանուր ժողովին մասնակցել անձամբ կամ լիազորել երրորդ անձին,
- օգտվել օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.6. Արտոնյալ (փոփոխական շահաբաժնով) բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերը իրավունք ունեն՝

- մասնակցել վարկային կազմակերպության կառավարմանը,
- ստանալ վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ որոշակի տեղեկատվություն (բացի գաղտնի փաստաթղթերից),
- կազմակերպության լուծարման դեպքում ստանալ կազմակերպության գույքի՝ իրեն հասանելիք մասը,
- օրենքով նախատեսված դեպքերում և կարգով մասնակցել կազմակերպության ընդհանուր ժողովին՝ ձայնի իրավունքով,
- օրենքով սահմանված կարգով և չափով ստանալ շահաբաժին՝ կազմակերպության գործունեությունից առաջացած շահույթից:

4.7. Բաժնետերերը իրավունքները ձեռք են բերում միայն բաժնետոմսերի լրիվ արժեքը մուծելուց հետո:

4.8. Վարկային կազմակերպությունը կարող է տեղաբաշխել սովորական և արտոնյալ (փոփոխական շահաբաժնով) բաժնետոմսեր՝ ՀՀ գործող օրենսդրության համապատասխան:

4.9. Բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել ինչպես տպագրական եղանակով պատրաստված բաժնետոմսի, այնպես էլ ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:

4.10. Կազմակերպության տեղաբաշխված արտոնյալ (փոփոխական շահաբաժնով) բաժնետոմսերը չեն կարող գերազանցել կանոնադրական հիմնադրամի 25 %-ը:

4.11. Բաժնետոմսերի դիմաց վճարվող շահաբաժինը, լուծարային արժեքը, փոխարկելիությունը կարգավորվում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.12. Կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը, ինչպես նաև, օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը և ձայնի իրավունք չտվող մասնակցություն ակնկալող իրավաբանական, ֆիզիկական անձ-մասնակիցը, կամ նրանց հետ փոխկապակցված մասնակիցները պարտավոր են մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը դիմել Կենտրոնական բանկ՝ նախնական համաձայնություն ստանալու համար, համաձայն գործող օրենսդրության:

4.13. Վարկային կազմակերպության բաժնետոմսերի օտարումը երրորդ անձին կարող է կատարվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

5.1. Տարեկան գործունեության արդյունքում վարկային կազմակերպության ստացած համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

5.2. Վարկային կազմակերպության զուտ շահույթը որոշվում է որպես կազմակերպության ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված շահութահարկի դրական տարբերությունը:

5.3. Զուտ շահույթի բաշխումն իրականացվում է սույն կանոնադրությամբ և Ժողովի կողմից սահմանված ֆոնդերի համալրման և սովորական բաժնետոմսերի սեփականատերերին շահաբաժինների վճարման նպատակով:

5.4. Շահաբաժինները վճարվում են ֆինանսական (հաշվետու) տարվա զուտ շահույթից Հայկական դրամով տարեկան շահաբաժինների վճարման ձևով:

5.5. Տարեկան շահաբաժինների վճարման, շահաբաժնի չափի և ձևի որոշումը ընդունում է Ժողովը՝ սահմանելով նաև վճարման ամսաթիվը:

5.6. Վարկային կազմակերպության բաժնետերերին շահաբաժիններ վճարելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին կազմակերպության կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին կազմակերպությունում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:

5.7. Վարկային կազմակերպության բաժնետերերին շահաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին կազմակերպության կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են կազմակերպության առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

VI. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Վարկային կազմակերպության կառավարման մարմիններն են.

- բաժնետերերի ընդհանուր ժողովը (հետագայում՝ ժողով), որը հանդիսանում է վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը,
- վարկային կազմակերպության խորհուրդը, որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- վարկային կազմակերպության գործադիր տնօրենը.

Ընդ որում, վարկային կազմկերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է վարկային կազմակերպության գործադիր տնօրենը:

6.1. Բաժնետերերի ընդհանուր ժողովը

6.1.1. Վարկային կազմակերպությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդանուր ժողով՝ բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է կանոնադրությամբ սահմանված ժամկետներում՝ հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Վարկային կազմակերպության արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

6.1.2. Վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է, եթե ժողովին ներկա են վարկային կազմակերպության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50%-ից ավելին տիրապետող բաժնետերերը:

6.1.3. Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրականացնում է՝

ա) վարկային կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, վարկային կազմակերպության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ) վարկային կազմակերպության վերակազմակերպումը,
գ) վարկային կազմակերպության լուծարումը,
դ) լուծարային հանձնաժողովի նշանակումը,միջանկյալ և ամփոփիչ լուծարային հաշվեկշռի հաստատումը,
ե) վարկային կազմակերպության խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Վարկային կազմակերպության խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես վարկային կազմակերպության բաժնետերերի տարեկան ժողովներում: Վարկային կազմակերպության խորհրդի անդամների ընտրության հարցը վարկային կազմակերպության արտահերթ ժողովներում կարող է քննարկվել, եթե վարկային կազմակերպության բաժնետերերի արտահերթ ժողովը որոշում է ընդունել վարկային կազմակերպության խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
է) բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի չափի մեծացումը,
ը) վարկային կազմակերպության վերատուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
ժա) վարկային կազմակերպության աուդիտն անցկացնող անձի հաստատումը,
ժբ) վարկային կազմակերպության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,
ժգ) ընդհանուր ժողովի վարման կարգը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
ժդ) վարկային կազմակերպության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի հրապարակային հայտարարության ձևով,
ժե) օրենքով սահմանված դեպքերում՝ վարկային կազմակերպության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը(ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքը 50 %-ից ավելին) ,
ժզ) վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով նախատեսված դեպքերում,
ժէ) վարկային կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:
6.1.4. Սույն կանոնադրության 6.1.3. կետում նշված իրավասությունները հանդիսանում են ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել վարկային կազմակերպության խորհրդին կամ գործադիր տնօրենին:
6.1.5. Որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդ որում, 6.1.3. կետի (ա), (բ), (դ), (զ) և (ժե) ենթակետերով սահմանված հարցի շուրջ որոշումներն ընդունվում են վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայնի 3/4 -ով:
6.1.6. Սույն կանոնադրության 6.1.3. կետի (գ) ենթակետերով սահմանված հարցի շուրջ որոշումն ընդունվում է վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայնի 3/4 -ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3- ից :
6.2. Վարկային կազմակերպության խորհուրդը
6.2.1. Վարկային կազմակերպության խորհուրդը բաժնետերերի ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում իրականացնում է ընդհանուր ժողովի լիազորությունները, բացառությամբ ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունից:

6.2.2. Վարկային կազմակերպության խորհրդի անդամները ընտրվում են կազմակերպության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում, մեկ տարի ժամկետով:

6.2.3. Խորհրդի կազմը սահմանվում է նվազագույնը երեք հոգի:

6.2.4. Վարկային կազմակերպության այն բաժնետերերը, որոնք կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի դրությամբ տիրապետում են կազմակերպության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին ,իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել վարկային կազմակերպության խորհրդի կազմում կամ վարկային կազմակերպության խորհրդի կազմում նշանակել իրենց ներկայացուցչին:

6.2.5. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի մեկ անդամից մյուսին չի թույլատրվում:

6.2.6. Վարկային կազմակերպության գործադիր տնօրենը ընկերության խորհրդի կազմում ընդգրկվում է առանց ընտրության:

6.2.7. Վարկային կազմակերպության խորհուրդը

- որոշում է վարկային կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները,
- օրենքով սահմանված դեպքերում գումարում է վարկային կազմակերպության տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովներ,
- հաստատում է վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը,
- լուծում է վարկային կազմակերպության ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերը,
- գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, գործադիր մարմնի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները:
- օրենքով սահմանված կարգով տեղաբաշխում է պարտատոմսեր և այլ արժեթղթեր,
- օրենքով սահմանված կարգով որոշում է գույքի շուկայական արժեքը,
- նախապատրաստում է առաջարկություններ վարկային կազմակերպության վերստուգող հանձնաժողովի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ,
- սահմանում է վարկային կազմակերպության աուդիտ անցկացնող անձի վարձատրության չափը,
- ընդհանուր ժողովի համար նախապատրաստում է առաջարկություններ վարկային կազմակերպության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,
- օգտագործում է վարկային կազմակերպության պահուստային հիմնադրամը,
- հաստատում է վարկային կազմակերպության և կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը,
- որոշում է ընդունում այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցության մասին,եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
- կնքում է վարկային կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50%-ի չափով),
- հաստատում է վարկային կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,
- իրականացնում է օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

6.2.8. Վարկային կազմակերպության խորհրդի նիստերը հրավիրվում են նրա նախագահի կողմից՝ ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերը կարող են գումարվել կազմակերպության վերատուգող հանձնաժողովի աուդիտն իրականացնող անձի, գործադիր մարմնի պահանջով:

6.2.9. Վարկային կազմակերպության խորհրդի նախագահը

- կազմակերպում է վարկային կազմակերպության խորհրդի աշխատանքները,

- գումարում է վարկային կազմակերպության խորհրդի նիստերը և նախագահում դրանք,
- կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
- նախագահում է վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովները:

Վարկային կազմակերպության խորհրդի նախագահն ընտրվում է վարկային կազմակերպության խորհրդի անդամների կողմից՝ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

Վարկային կազմակերպության խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ վարկային կազմակերպության խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

6.3. Գործադիր տնօրենը

Վարկային կազմակերպության գործադիր տնօրենը

- տնօրինում է վարկային կազմակերպության գույքը,այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում վարկային կազմակերպության անունից,
- ներկայացնում է վարկային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
- տալիս է լիազորագրեր,
- գործում է առանց լիազորագրի,
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- խորհրդի հաստատմանն է ներկայացնում վարկային կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, վարկային կազմակերպության վարչակազմակերպական կառուցվածքը,
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար
- պարտադիր ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը,
- սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում վարկային կազմակերպության աշխատակիցներին,
- վարկային կազմակերպության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- վարկային կազմակերպության հաշվեկշռային արժեքի 25%-ից ավելի գործարքները կնքում է խորհրդի (մինչև 50%) կամ ընդհանուր ժողովի (50%-ից ավելի) նախնական համաձայնության առկայության դեպքում:

6.4. Վարկային կազմակերպության ղեկավարները

6.4.1. Վարկային կազմակերպության ղեկավար են հանդիսանում վարկային կազմակերպության խորհրդի նախագահը, անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, նրա անդամները, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

6.4.2 Վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են գործող օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական բանկի որոշումներով և սույն կանոնադրությամբ, իսկ իրենց ֆունկցիոնալ պարտականությունները կանոնակարգվում են բաժինների կանոնակարգերով, որոնք հաստատվում են վարկային կազմակերպության խորհրդի կողմից:

VII ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Վարկային կազմակերպությունը հաշվապահական հաշվառումը վարում է Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի հետ

համաձայնեցված կարգով՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

7.2. Վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկի սահմանված կարգով և ժամկետներում կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Կենտրոնական բանկի սահմանած այլ հաշվետվություններ:

7.3. Վարկային կազմակերպության ներդրումային արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը և օգտագործումը, վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումն իրականացվում է բանկերի համար «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան սահմանված կարգերով:

VIII ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

8.1. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները դրված են վերստուգողի վրա, որը նշանակվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, երեք տարի ժամկետով: Վարկային կազմակերպության խորհրդի անդամները չեն կարող միաժամանակ լինել վերստուգող:

8.2. Վերստուգողը՝

- վարկային կազմակերպությունում հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների վարման նկատմամբ,
- վարկային կազմակերպության խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին վարկային կազմակերպության գործունեության համապատասխանության, ինչպես նաև Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված ժամկետում կատարելու մասին,
- եզրակացություններ է տալիս վարկային կազմակերպության խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,
- իրականացնում է բաժնետերերի ժողովի կողմից, ինչպես նաև օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

8.3. Վերստուգողը վարկային կազմակերպության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ կազմում է եզրակացություն և ներկայացնում վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովին: Վարկային կազմակերպության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:

8.4. Վարկային կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումն ու ստուգումը կատարվում է ինչպես ըստ վերստուգողի հաստատած պլանի, այնպես էլ բաժնետերերի ժողովի, վարկային կազմակերպության խորհրդի, կամ 10 տոկոսը տիրապետող բաժնետերերի պահանջով:

8.5. Վերստուգման արդյունքներից ելնելով՝ վերստուգողը իրավունք ունի պահանջել վարկային կազմակերպության բաժնետերերի արտահերթ ժողովի կամ վարկային կազմակերպության խորհրդի, վարչության արտահերթ նիստի հրավիրում:

8.6. Յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից, որին նշանակում է վարկային կազմակերպությունը:

8.7. Անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում:

IX ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՈՒԴԻՏԱՅԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

9.1. Վարկային կազմակերպությունը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունները:

9.2. Վարկային կազմակերպությունը պարտավոր է մինչև յուրաքանչյուր եռամսյակային հաջորդ ամսվա 15-ը հրապարակել իրենց եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

9.3. Վարկային կազմակերպությունը պարտավոր է պարբերաբար հրապարակել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ Կենտրոնական բանկի սահմանված կարգով և հաճախականությամբ:

X ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

10.1. Վարկային կազմակերպության գործունեությունը դադարեցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով: Վարկային կազմակերպության գործունեությունը դադարում է վերակազմավորման (միաձուլման, վերափոխման) և լուծարման միջոցով:

10.2. Վարկային կազմակերպության վերակազմավորումը կատարվում է վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի, ինչպես նաև դատարանի որոշմամբ, ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ ՀՀ Կենտրոնական բանկի համաձայնությամբ:

10.3. Վարկային կազմակերպության լուծարման մասին որոշում ընդունելու պահից ստեղծվում է լուծարային հանձնաժողով, որը նշանակվում է վարկային կազմակերպության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

10.4. Վարկային կազմակերպությունը համարվում է լուծարված՝ լուծարային հանձնաժողովի կողմից իր գործունեության արդյունքների վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունը վերջինիս կողմից հաստատվելուց հետո: Վարկային կազմակերպության լուծարման մասին ՀՀ Կենտրոնական բանկում վարվող գրանցման մատյանում և ձեռնարկությունների պետական ռեգիստրում կատարվում է համապատասխան գրառում:

10.5. Լուծարային հանձնաժողովը վարկային կազմակերպության լուծարման վերաբերյալ տեղեկանք է հրապարակում: